Գրեթչեն Փիքլեզայմեր Քիննի
(Հիմնված է իրական պատմության վրա)

Բուն և կետադելֆինը

Այս պատմությունը տեղի է ունեցել Կանադայում:

Դիթերը ցանկանում էր լսել գերագույն համաժողովը: Նա փորձեց հանգիստ նստել: Ապա՝ փորձեց լսել ելույթները: Բայց աուտիզմը խանգարում էր նրան կենտրոնանալ: Նա պտտվեց բազմոցի վրա: Հետո խաղում էր իր խաղալիքներով: Նաև վազվզում էր:

Ապա՝ նա նայեց հայրիկին: Հայրիկը լուռ նստած լսում էր խոսնակներին: Դիթերը ցանկանում էր նմանվել նրան: Ուստի, նա վերցրեց իր նկարչության պարագաները:

Միգուցե նկար ներկելը օգներ նրան հանգիստ նստել:

Մինչ Դիթերը գունավորում էր նկարը, լսում էր երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի ելույթը: Երեց Հոլլանդը մի պատմություն պատմեց Հիսուսի մասին: Հիսուսը մի հարուստ երիտասարդի խնդրեց, որ իր ամբողջ գումարը տա աղքատներին:*

Դիթերը ցանկանում էր օգնել մարդկանց, որոնք նույնպես բավարար գումար չունեին: Եվ նա մի գաղափար ուներ:

«Մայրի՛կ, ես ուզում եմ բուն նկարել»,

- ասաց Դիթերը: «Կարո՞ղ ես մի բուն նկարել ինձ համար»:

«Իհարկե»,- ասաց մայրիկը: Նա մի բուն նկարեց:

Դիթերն իր վրձինը թաթախեց ներկի մեջ: Սկզբում նա նկարեց բուի թևերը: Նա որոշ փետուրներ ներկեց դարչնագույն, իսկ մի քանիսը՝ նարնջագույն: Նկարելիս նա լսում էր մյուս ելույթները: Նույնիսկ, երբ բոլոր ելույթներն ավարտվեցին, Դիթերը շարունակեց ներկել: Նա ցանկանում էր, որ բուն կատարյալ լիներ:

Վերջապես Դիթերն ավարտեց: Նա բուի նկարը ցույց տվեց մայրիկին:

«Հրաշալի է»,- ասաց մայրիկը: «Կախե՞նք»:

Դիթերը տարուբերեց գլուխը. «Ես ուզում եմ վաճառել այն և գումարը տալ այն մարդկանց, որոնք բավարար գումար չունեն: Ինչպես նրանք այդ մասին խոսեցին համաժողովին»:

Մայրիկը ժպտաց: «Տեսնենք, թե ինչ կարող ենք անել»:

Նա տեղադրեց Դիտերի նկարը՝ առցանց վաճառելու համար: Մայրիկը գրեց, որ Դիթերը այդ գումարը կտա անտուն մարդկանց ապաստարանին:

Հաջորդ օրը Դիթերն ու մայրիկը ստուգեցին գրառումը: Դիթերը չէր հավատում աչքերին: Բազմաթիվ մարդիկ ցանկանում էին գնել նրա նկարը: Նա ուրախ էր, որ այդքան շատ մարդիկ ցանկանում էին օգնել:

Դիթերի քաղաքի ռեստորանը ցանկանում էր գնել նկարը: Նրանք ասացին, որ կվճարեն 10 անգամ ավել գումար, քան խնդրել էին Դիթերն ու մայրիկը: Մյուս խանութները ևս նրանից նկարներ էին

խնդրել: Դիթերն ավելի շա՛տ աշխատանք ուներ անելու:

Մայրիկն ավելի շատ կենդանիների նկարներ գտավ, և Դիթերը հանեց ներկերը: Նա նկարեց գայլ, առյուծ և կետադելֆին: Նրան ամենից շատ դուր եկավ կետադելֆինը: Նա այն անվանեց «Օտիս կետադելֆին»: Նրա տան մոտ գտնվող մթերային խանութը գնեց այն: Հաջորդ անգամ, երբ Դիթերը գնաց խանութ, տեսավ այն պատից կախված:

«Նայի՛ր, մայրիկ»: Դիթերը մատնացույց արեց նկարը:

«Հրաշալի՜ է»,- ասաց մայրիկը: «Այժմ, երբ մենք գանք այստեղ, կարող ենք հիշել, թե քո տաղանդներն ինչպես են օգնել մարդկանց»:

Դիթերը հպարտ էր, որ մարդկանց դուր են եկել իր նկարները: Բայց նա ավելի ուրախ էր, որ կարող էր օգնել ուրիշներին: Նա ուրախ էր, որ լսել էր գերագույն համաժողովի ելույթները: ●

* *Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Մեծագույն հարստությունը»,* Լիահոնա, *նոյեմբեր 2021, 8-10:*

Դիթերը նկարներ էր նկարում վաճառելու համար, քանի որ ցանկանում էր օգնել մարդկանց: Իսկ դու ինչպե՞ս կարող ես օգնել ուրիշներին: